

**Կայուն զբոսաշրջության միջոցով համահայկական մշակութային ժառանգության
հանրահռչակում և խթանում**

Հարգելի՛ հյուրեր և մասնակիցներ,

տիկնայք և պարոնայք,

Թույլ տվեք ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի անունից ողջունել «Հայաստանի զբոսաշրջության խթանումը՝ որպես մեր պատմության ու մշակույթի ներկայացման արդյունավետ եղանակ» խորագրով նիստի մասնակիցներին:

Լինելով հզոր խթան տնտեսության զարգացման համար՝ զբոսաշրջությունն այսօր հանդիսանում է համաշխարհային տնտեսության գերակա ճյուղերից՝ ունենալով մեծ ազդեցություն քաղաքական գործընթացների վրա, ինչպես նաև համաշխարհային տնտեսության կառուցվածքի, թե առանձին երկրների ու տարածաշրջանների տնտեսությունների վրա:

Զբոսաշրջությունը՝ լինելով Հայաստանի Հանրապետության տնտեսության գերակա ճյուղերից մեկը, գտնվում է կառավարության ուշադրության ներքո, որն իր զարգացումների կարևորությամբ ներառված է այնպիսի գլոբալ համակարգերում, ինչպիսիք են կայուն զարգացման, շրջակա միջավայրի պահպանության, համայնքների համաչափ զարգացման, մշակութային արժեքների փոխադարձ արժևորման և մարդկային զարգացման տարաբնույթ համակարգերը, որոնք Հայաստանի պարագայում արդիական և էական նշանակություն ունեն:

Առկա վիճակագրությունը լավատեսություն է ներշնչում Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացման հեռանկարների վերաբերյալ: Մկսած 2008 թվականից այցելությունների թիվն ունի կայուն աճի միտում՝ աճելով տարեկան միջինը 9%-ով:

Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների 2016 թվականին հանրապետություն են ժամանել է 1.259.188 զբոսաշրջիկ, ինչը 2015 թվականի համեմատ աճել է 5,7%, ընդլայնվել է նաև այցելությունների աշխարհագրությունը:

2017 առաջին վեց ամիսների ընթացքում Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվը աճել է 24,2 տոկոսով, որը աննախադեպ ցուցանիշ է:

Զբոսաշրջության ոլորտում զարգացումների մասին են վկայում վերջին տարիներին կատարված շարունակական այն գործընթացները, որոնք միտված են զբոսաշրջության ոլորտի ինստիտուցիոնալ, մարքեթինգային, ներդրումային, ենթակառուցվածքային, համագործակցային և այլ զարգացումներին:

Հարգելի տիկնայք և պարոնայք,

Առանձնահատուկ է պատմամշակութային ժառանգության դերը զբոսաշրջության քաղաքականության ձևավորման ու զարգացման գործում: Պատմամշակութային

հուշարձանները յուրովի են ներկայացնում մարդկության ձևավորման, զարգացման ու վերընթացի ուղին: Հայությունն իր բազմադարյա պատմության խաչուղիներում ստեղծել է նյութական ու հոգևոր մշակութային բացառիկ արժեքներ՝ հարուստ ժառանգություն, որը համաշխարհային մշակույթի գանձարանի անբաժանելի մասն է:

Այսօր Կոմիտեի առջև դրված խնդիրներից և դրանց լուծմանն ուղղված կարևորագույն միջոցառումներից են Հայաստանի հարուստ և գունագեղ մշակութային ժառանգության հանրահռչակումը, պահպանությունը և սերունդներին անխաթար փոխանցումը: Կցանկանայի շեշտել, որ զբոսաշրջության առաջնային նպատակներից է նաև պատմամշակութային, ազգային ժառանգության և ավանդույթների վերականգնումը, պահպանումն ու զարգացումը, մշակութային արժեքների նորովի արժևորումը: Այստեղ շատ կարևոր է նշել, որ մշակութային ժառանգության հանրահռչակումը նաև համայնքների տնտեսական կայուն զարգացման գրավականն է:

Համայնքները մշակութային ժառանգության անքակտելի մասն են կազմում: 21-րդ դարի զբոսաշրջիկը երկրի մշակութային ժառանգության ճանաչողական երթուղու ընթացքում ծանոթանում է ոչ միայն ձեռակերտ հուշարձանների հետ, այլ նաև երկրի հոգևոր արժեքներին՝ խոհանոցին, երգին ու պարին, ավանդույթներին: Իսկ ձեռակերտ հուշարձանները այն շոշափելի խարիսխն են, որոնք կապում են անցյալը, ներկան և ապագան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է երկրի համաչափ կայուն զարգացման գործընթաց, որը ենթադրում է նոր ենթակառուցվածքների ստեղծում, մշակութային ժառանգությամբ հարուստ պատմական քաղաքների զարգացում և ընդլայնում, մշակութային զբոսաշրջության, արդյունաբերության զարգացում՝ մարտահրավերներ են առաջացել քաղաքաշինական զարգացումների և ժառանգության պահպանության միջև, ուստի հրատապ է մշակութային ժառանգության և երկրի կայուն զարգացման գործընթացների ներդաշնակ կառավարման գործիքների մշակումը, մշակութային ժառանգության որպես զբոսաշրջային արդյունքի ձևավորումը, այցելուի համար անմոռանալի տպավորությունների՝ այսինքն հավելյալ արժեքի ստեղծումը, ինչը հնարավորություն կտա ոչ միայն պահպանել այն, այլ նաև հանրահռչակել, դիտարկելով որպես երկրի կայուն զարգացման սոցիալական և տնտեսական ռեսուրս:

Այսօր, կարելի է ասել, Հայաստանի մշակութային ժառանգությունն ուսումնասիրված և հաշվառված է, ուսումնասիրված է նաև մշակութային ժառանգության զարգացման դարավոր ընթացքը, ստեղծված են ժառանգության ֆիզիկական պաշտպանության և դրանց դերի ու նշանակության պահպանության իրավական հիմքերը: Այդուհանդերձ, նորանոր ձևաչափեր են մշակվում ժառանգության պահպանության, հանրահռչակման, մշակութային զբոսաշրջության զարգացման և մշակութային ժառանգության միջոցով բնակչության բարեկեցիկ կյանքի ապահովման լիարժեք երաշխիքներ ստեղծելու համար:

Կոմիտեի կողմից մեծ ջանքեր են ներդրվում բարձրացնելու Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիությունը, որի գործընթացում մեծ դեր կարող են ունենալ հայկական սփյուռքը և հայկական համայնքները օտարերկրյա շատ պետություններում:

Սփյուռքի հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող միջոցառումներ, այդ թվում՝

- ✓ մարքեթինգային և խթանման միջոցառումներում և շնորհանդեսներում սփյուռքի համայնքների ներգրավում՝ համագործակցելով եկեղեցու, ՀՀ դեսպանությունների, հայկական համայնքների և համայնքային կազմակերպությունների հետ,
- ✓ սփյուռքի պարբերականներում գովազդային հոդվածների հրապարակում,
- ✓ Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի գրավչության վերաբերյալ տեղեկատվության տարածում սփյուռքի հոգևոր, մշակութային, հայագիտական կենտրոնների և մասնագիտացված միությունների տեղեկատվական հարթակների միջոցով,
- ✓ սփյուռքում լայն տարածում ունեցող հեռուստապլիքների հետ բանակցությունների վարում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող ֆիլմեր և տեսանյութեր հեռարձակելու նպատակով:
- ✓ սփյուռքի հայկական համայնքների հետ համագործակցության ակտիվացում՝ համագործակցելով շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ:
- ✓ սփյուռքում լայն տարածում ունեցող հայաստանյան լրագրողների համար Հայաստանում և Արցախում ճանաչողական այցերի կազմակերպում:

Կրկին ողջունելով մասնակիցներին հուսով եմ, որ Հայաստան-Սփյուռք համագործակցությունը էլ ավելի կզարգանա, կունենա շարունակական բնույթ և մեծապես կնպաստի Հայաստանի տնտեսության, մասնավորապես զբոսաշրջության զարգացմանը:

Զարմինե Զեյթունցյան

Հայաստանի զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ: